



# Social Security

## Նպաստների ՀԱԼԱԼՈՒՄ

2008

[www.socialsecurity.gov](http://www.socialsecurity.gov)

## **Սոցիալական Ապահովության Հետ Կամ Հաստատել**

### **Այցելեցեք Մեր Կայքէջը**

Մեր կայքէջը, [www.socialsecurity.gov](http://www.socialsecurity.gov) պարունակում է Սոցիալական Ապահովության ծրագիրների լրի տեղեկությունները: Այս կայքէջում նաև կարող եք՝

- Դիմել նախատերի
- Գտնել ձեր տեղական Սոցիալական Ապահովության Գրասենեակի հասցեն
- Ստանալ կարեւոր տեղեկություններ՝ ինչպէս ձեր *Սոցիալական Ապահովության Հաջուեցույցը (Social Security Statement)* կամ փոխարինել ձեր «Medicare» քարտը, իսկ
- Գտնել մեր հրատարակությունների օրինակները

Այս ծառայությունների մի մասը միայն Անգլերէն լեզվով էն: Հայերէն հրատարակությունները տեսմելու համար այցելեցեք մեր Բազմալեզուական Կենդրութիւնը [www.socialsecurity.gov/multilanguage](http://www.socialsecurity.gov/multilanguage) եւ ընտրեցեք, Հայերէն:

### **Զանգահարեք Մեր 1-800 Թվին**

Մեր վեր կայքը օգտագործելուց բացի դուք կարող եք անվճար զանգահարել՝ **1-800-772-1213** հեռախոսահամարով: Մեր կողմից բոլոր հեռախոսազանգերը սպահվում են զաղտնի: Մենք կարող ենք պատասխանել որոշակի հարցերի ժամը 7-ից մինչեւ 19-ը՝ երկուշաբթից մինչեւ ուրբար: Մենք կարող ենք ապահովել քարզմանչի անվճար ծառայություններ՝ հեռախոսով կամ ձեր տեղական գրասենյակում: Մենք նաև տրամադրում ենք տեղեկատվություն տեղեկատվության ավտոմատացված շորջօրյա հեռախոսային ծառայության միջոցով: (Օգտվելով մեր ավտոմատ պատասխանիչ համակարգից, դուք կարող եք հայտնել մեզ ձեր նոր հասցեն կամ խնդրել Medicare-ի փոխարինող քարտ) Եթե դուք խուզ եք կամ ունեք լողության դժվարություն, ապա կարող եք զանգահարել մեր TTY հեռախոսահամարով՝ **1-800-325-0778**:

Մենք ուզում ենք նաև երաշխավորել, որպեսզի դուք ստանաք ճշգրիտ եւ քաղաքավարի սպասարկում: Այդ պատճառով որոշակի հեռախոսազանգեր հակվում են Սոցիալական ապահովության երկրորդ ներկայացուցչի կողմից:

## **ՄԵԶԸ ԻՆՉ Է ԱՊԱՐՈՒՆԱԿՈՒՄ**

**Սոցիալական Ապահովություն. պարզ գաղափար ... 4**

**Դուք ինչ պետք է իմանաք Սոցիալական  
Ապահովության մասին աշխատելու ժամանակ ..... 7**

**Դուք նպաստների մասին ինչ պետք է իմանաք ..... 9**

**Նպաստներ ձեր ընտանիքի համար ..... 14**

**Երբ պատրաստ եք նպաստների դիմելու ..... 17**

**Լրացուցիչ Ապահովության Եկամուտի (SSI)  
ծրագիրը ..... 19**

**Բողոքարկման իրավունքը ..... 19**

**Medicare ..... 20**

**Որոշ տեղեկություն Սոցիալական  
Ապահովության մասին ..... 23**

## Սոցիալական Ապահովություն. պարզ գաղափար

Սոցիալական Ապահովությունը հասնում է համարյա յուրաքանչյուր ընտանիքի եւ որոշակի պահին դաշտում է գրեթե բոլոր Ամերիկացիների կյանքի:

Սոցիալական Ապահովությունը օգնում է տարեց Ամերիկացիներին, հաշմանդամ աշխատողներին եւ ընտանիքների վերապրող անդամների, որոնք կորցրել են ամուսին (կին) կամ ծնող: Ներկայում ավելի քան 157 միլիոն մարդ ապրում եւ վճարում է Սոցիալական Ապահովության հարկեր եւ ավելի քան 50 միլիոն մարդ ստանում է Սոցիալական Ապահովության ամսական նպաստներ:

Մեր նպաստառուներից մեծ մասը թոշակառուներ են եւ նրանց ընտանիքները՝ մոտ 34 միլիոն մարդ:

Սակայն Սոցիալական Ապահովությունը երբեք չի նպաստեավել որպես կենսարոշակառուների եկամուտի միակ աղբյուրը: Կենսարոշակի անցնելուց հետո, Սոցիալական Ապահովությունը վճարում է միջին չափի աշխատավարձ ստացողի եկամուտի մոտ 40 տոկոսը: Իսկ դրամական վերլուծաբանները ասում են թե թոշակառուները պետք ունեն նրանց աշխատանքի եկամուտի մոտ 70 տոկոսը ապրելու հանգիստ կյանք կենսարոշակի անցնելուց հետո: Այս հանգիստ կյանքը ապրելու համար, Ամերիկացիները Սոցիալական Ապահովության թոշակից շատ ավելին պետք ունեն: Անհրաժեշտ է որ անոնք ունենան անձնական կենսարոշակներ, ինայողություններ եւ ներդրումներ:

Սոցիալական Ապահովության Վարչությունը ցանկանում է որ ձեզ բացատրել Սոցիալական Ապահովության նպատակը եւ նրա կարեւորությունը ձեզ եւ ձեր ընտանիքի դրամական ապագայի համար: Սույն հրապարակում՝ **Նպաստըների ՀԱՂԱԼՈՒՄ** բացատրում է Սոցիալական Ապահովության ծերության, հաշմանդամության եւ վերապրողների ապահովագրական ծրագրերի հիմունքների մասին:

Սոցիալական Ապահովության ընթացիկ ծրագիրը այսպես գործում է, աշխատելու ընթացքում դուք վճարում եք Սոցիալական Ապահովության հարկեր: Հարկերից գոյացած փողերը գործածվում են նպաստներ վճարելու համար՝

- Արդեն կենսարոշակի անցած մարդկանց.
- Հաշմանդամներին.

- Մահացած աշխատողների ընտանիքի վերապրող անդամների. եւ
- Նպաստառուների խնամքի տակ գտնվող ընտանիքի այլ անդամների:

Զեր վճարած հարկերը ձեր ապագա նպաստների համար անձնական հաշվի մեջ չեն պահպում Զեր հարկերը օգտագործվում են հիմա՝ ներկայում նպաստներ ստացող մարդկանց վճարելու համար: Բոլոր չօգտագործված գումարները պահպում են Սոցիալական Ապահովության հիմնադրամի ֆոնդի մեջ եւ ոչ թէ ձեր անունով անձնական հաշվի մեջ:

## **Սոցիալական Ապահովությունը կենարոշակի անցնելէ ավելի է**

Շատ մարդիկ ընկալում են Սոցիալական Ապահովությունը որպես միայն կենարոշակային ծրագիր: Թէև Սոցիալական Ապահովության նպաստառուների մեծ մասը ստանում է ծերության նպաստներ, շատ որիցներ այլ ստանում են Սոցիալական Ապահովություն, որովհետեւ նրանք՝

- Հաշմանդամ են. կամ
- Սոցիալական Ապահովություն ստացողի ամուսինը (կինը) կամ երեխան են. կամ
- Մահացած աշխատողի ամուսինը (կինը) կամ երեխան են. կամ
- Կախյալ ծնողն են մի աշխատողի որ մահացել է:

Կախված ձեր հանգամանքներից դուք որեւէ տարիքում կարող եք իրավասու լինել Սոցիալական Ապահովության համար: Փաստորեն, Սոցիալական Ապահովությունը ավելի շատ նպաստներ է վճարում երեխաներին, քան որեւէ այլ կառավարական ծրագիր: Այսօր 48 միլիոնից ավելի մարդ՝ մոտավորապես ամեն մի վեցերորդ Ամերիկացին, ստանում է մի տեսակ Սոցիալական Ապահովության նպաստ:

## **Զեր Սոցիալական Ապահովության հարկերը**

Զեր եւ մյուս աշխատողների վճարած Սոցիալական Ապահովության հարկերը օգտագործվում են Սոցիալական Ապահովության նպաստներ վճարելու համար:

Դուք վճարում եք Սոցիալական Ապահովության հարկեր մինչեւ ձեր հասույթի որոշ որոշ գումարը: Այդ գումարը յուրաքանչյուր տարի բարձրանում է համապատասխանելու աշխատավարձերի բարձրացման հետ: 2008 թվականում այդ գումարն է 102,000 դրամ:

## Medicare հարկերը

Դուք վճարում եք Medicare հարկեր ձեր բոլոր աշխատավարձերից կամ ինքնաշխատությունից առաջացած գուստ հասույթից: Այդ հարկերը օգտագործվում են Medicare ապահովության համար:

Եթե դուք աշխատում եք որիշի մոտ	Սոցիալական Ապահովության հարկ	Medicare հարկ
Դուք վճարում եք	6,2%	1,45%
Ձեր գործառուն վճարում է	6,2%	1,45%
Եթե դուք ինքնաշխատ եք		
Դուք վճարում եք	12,4%	2,9%

## Ինչպես են գործածվում ձեր Սոցիալական Ապահովության հարկի դոլարները

Ձեր աշխատավարձի համեմատ վճարած յուրաքանչյոր Սոցիալական Ապահովության հարկի 85 սենյը ուղղվում է Սոցիալական Ապահովության հիմնադրամի ֆոնդի, որտեղից վճարվում են ամսական նայաստները ներկայիս բոշակառուներին և նրանց ընտանիքներին, ինչպես նաև մահացած աշխատողների վերաբրող ընտանիքի անդամների (ամուսիններին կամաց) և երեխաններին: Մնացած 15 սենյը գնում է մի տարբեր հիմնադրամի ֆոնդի, որը նպաստներ է վճարում հաշմանդամանիատների և նրանց ընտանիքներին:

Նշված Սոցիալական Ապահովության հիմնադրամը նոյնպէս վճարում է Սոցիալական Ապահովության ծրագրերի կառավարման ծախսերը: Սոցիալական Ապահովության Վարչությունը հանդիսանում է դաշնային կառավարության ամենաարդյունավետ գերատեսչություններից մեկը և մենք ամեն օր աշխատում ենք դա բարեկավելու համար: Ձեր վճարած Սոցիալական Ապահովության հարկի յուրաքանչյոր դոլարից մեկ սենյից պակասը օգտագործվում է Սոցիալական Ապահովության ծրագրերի կառավարման ծախսերի համար:

Medicare համար վճարված լրիվ գումարը ուղղվում է Սոցիալական Ապահովության հիմնադրամի ֆոնդի որը վճարում է Medicare նպաստառուների հիվանդանոցի և քծկական որոշ ծախսերը: Medicare վարդում է Medicare և Medicaid

Ծառայությունների Կետրոնից (Centers for Medicare & Medicaid Services) ոչ Սոցիալական Ապահովության կողմից:

## Դուք ինչ պետք է իմանաք Սոցիալական Ապահովության մասին աշխատելու ժամանակ

### Զեր Սոցիալական Ապահովության համարը

Զեր Սոցիալական Ապահովության համարը ձեր կասմից Սոցիալական Ապահովության Վարչության հետ: Դուք ճանաչ կարիքը կունենաք աշխատելու և հարկեր վճարելու համար: Մենքգործածում ենք ձեր Սոցիալական Ապահովության համարը արձանագրելու ձեր աշխատանքի հասույթը, իսկ երբ նպաստառու լինեք՝ ձեր նպաստները հսկելու համար:

Մի կրեք ձեր Սոցիալական Ապահովության քարտը ձեզ հետ բացի երբ կարիք ունեք այն ցույց տալու ձեր գործառություն: Դուք պետք է գօռոյշ լինեք թե որու ցոյց եք տալիս ձեր Սոցիալական Ապահովության քարտը: Ինքնուրյան գորությունը այսօր ամենաարագ աճող հանցագործություններից մեկն է: Ինքնուրյան գորերը ձեր Սոցիալական Ապահովության համարը եւ ձեր լավ վարկը օգտագործելով ձեր անունի տակ յաւելյալ վարկերի դիմում են: Այսուհետեւ, ճրանք գործածում են այդ վարկերի քարտերը (credit cards) եւ զնում են ապրանքներ ու չեն վճարում հաշիվները:



Զեր Սոցիալական Ապահովության համարը եւ ձեր անձնական սլյափակը մեր մոտ ապահով են: Առանց ձեր գրավոր արտօնության մենք ձեր անձնական տեղեկությունը չենք տալիս ուրիշի, բացի այդ դեպքում երբ օրենքը բույլատրում է:

Դիմեք մեզ, եթե պետք ունեք Սոցիալական Ապահովության համարի, եթե կորցրել եք ձեր համարը եւ նոր քարտի կարիք ունեք կամ էլ եթե ձեր ունեցած քարտի վրա ձեր անունը փոխելու կարիքը լինի: Մենք պահանջում ենք որ լրացնեք մի պարզ մեկ էջանց ձեւաբուղը մը եւ ներկայացնեք որոշ փաստարդութեր: Անհրաժեշտ է որ բոլոր փաստարդութերը լինեն բնագիր կամ վավերացված այն կազմակերպության կողմից որ զանոնք պարենաւորած է: Մենք չենք կարող ընդունել կրկնօրինակներ կամ նոտարի կողմից հաստատված փաստարդութեր:

Բնանգիր կամ փոխարինող Սոցիալական Ապահովության քարտ ստանալու համար պետք է ներկայացնեք վկայականներ որոնք փաստում են ձեր Ամերիկյան քաղաքացիությունը կամ ԱՄՆ օրինավոր ապրելու կարգավիճակը, ձեր տարիքն ու ինքնությունը: Փոխարինող քարտ ստանալու համար անհրաժեշտ չի ներկայացնել տարիքի եւ Ամերիկյան քաղաքացիության փաստարդեր եք արդեն մեր մոտ այս տեղեկությունը ունենք: Որպես ԱՄՆ քաղաքացիության վկայություն մենք կարող ենք ընդունել միայն որոշակի փաստարդեր: Դրանց շարքում են ԱՄՆ ծննդյան վկայականը, ԱՄՆ հյուսատոսական ծառայության կողմից ծննդյան գրանցումը, ԱՄՆ անցագիրը, Հայաստակագրման վկայականը կամ Քաղաքացիության վկայականը: Տարբեր օրենքներ ունենք ոչ ԱՄՆի քաղաքացիների համար: Ձեր ինքնությունը հաստատելու համար մենք կարող ենք ընդունել փակերական (ոչ ժամկետանց) փաստարդեր որոնք ցույց են տալիս ձեր անունը, ազգանունը եւ ինքնությունը հաստատող տեղեկություն՝ օրինակ ԱՄՆ վարորդական իրավունքը, նահանգի կողմից տրված ինքնությունը հաստատող ոչ վարորդական քարտը կամ ԱՄՆ անցագիրը: Ցանկալի է որ այն ունենալու վերջերս հանված լրացնկար մը:

Եթե ուզում եք ձեր անունը փոխել ձեր Սոցիալական Ապահովության քարտում, պետք է ներկայացնեք վերջերս տրված փաստարդեր որպես օրինական փոփոխման վկայություն:

Ձեր Սոցիալական Ապահովության քարտը պաշտմանեցեք որովհետև մէկ տարվա ընթացքում երեք անգամից ավել չեք կարող փոխարինել զայն իսկ ձեր կյանքի ընթացքում 10 քարտից ավել չեք կարող ստանալ: Անոնք օրինական փոփոխություններն ու այլ բացառություններ հաշվի չեն առնվազ: Օրինակ, ոչ քաղաքացու կարգավիճակի փոփոխությունները, որոնք պահանջում են քարտի նորորումը, հաշվի չեն առնվազ: Նաև եթե ապացուցեք որ քարտը ձեզ անհրաժեշտ է լորջ դժվարություն կանխելու համար, դարձեալ կարող եք սահմանափակ քարտերից ավել ստանալ:

Յաեւլյալ տեղեկության համար կազ հաստատեք մեզ հետ կամ կ լարդացեք Ձեր Սոցիալական Ապահովության Համարն ու Քարտը հրատարակությունը (հրապարակման համար 05-10002-AM): Եթե ԱՄՆ-ի քաղաքացի չեք, կարդացեք Սոցիալական Համարներ Ոչ Քաղաքացիների Համար հրատարակությունը (հրապարակման համար 05-10096-AM):

Մեր լրիվ ծառայությունները անվճար են: Մենք երբեք փող չենք գանձում մեր ծառայությունների համար:

## Խնդիր իրավասու լինում եք Սոցիալական Ապահովություն ստանալու համար

Աշխատելու եւ հարկեր վճարելու ընթացքում դուք վաստակում եք «credits (վարկեր)»: 2008 թվականում դուք վաստակում եք վարկ յուրաքանչյուր 1,050 դրամի փոխարժեն՝ տարեկան առավելագույնը չորս վարկ: (Յուրաքանչյուր տարի վարկ ստանալու համար պահանջվող գումարը փարձրանում է):

Ընդհանրապես ամիսու մը պեսոք ունի 40 վարկ (10 տարվա աշխատանք) նպաստներու իրավասու դառնալու համար: Երիտասարդ մարդկիկ ավելի քիչ վարկերու կարիքը ունեն իրավասու լինելու հաշմանդամության կամ վերապրողների նպաստների համար:

### Դուք նպաստների մասին ինչ պետք է իմանաք

Սոցիալական Ապահովության նպաստները կենսաբոշակի անցնելուց, հաշմանդամ դառնալուց կամ մահվանից հետո փոխարինում են ձեր հասույթի մի մասը: Յուրաքանչյուր տարի մենք ուղարկում ենք ձեզ *Սոցիալական Ապահովության Հաջուկցոյց (Social Security Statement)* ը, նշելով ձեր հասույթի պատմությունը եւ ներկայացնելով ձեր կենսաբոշակի, հաշմանդամության եւ վերապրողների նպաստների կռահումը ձեր հասույթի իման վրա: Եթե ստանաք ձեր Հաջուկցոյց ը, ուշադիր ստուգեք ձեր հասույթի պատմությունը: Զննեցք ձեր ամրող վաստակի հջոությանը: Տեղեկացրեք մեզ եթե սխալ կամ պակաս տեղեկություն պարունակում է այդ: Դա շատ կարեւոր է, որովհետեւ ձեր նպաստները հիմնվելու են ձեր կյանքի ընթացքում ձեռքբերված ամրող վաստակի վրա: Ձեր Հաջուկցոյցը կարող եք նաև գործածել ձեր դրամական ապագան ծրագրելու նպատակով:

### Ծերության նպաստներ

Կենսաբոշակի անցնելու ժամանակի ընտրությունը կյանքի ամենակարեւոր որոշումներից մեկն է: Եթե դուք որոշեք կենսաբոշակի անցնել կենսաբոշակի լրիվ տարիքին հասնելու պահին, ապա դուք կստանաք ձեր ծերության բոլոր նպաստները: Իսկ եթե կենսաբոշակի անցնեք ձեր լրիվ կենսաբոշակի տարիքիը շատած, դուք մշտապես կստանաք կրծատված կենսաբոշակ:

## Լրիվ կենսաքոշակի անցնելու տարիքը

Եթե դուք ծննդել եք մինչեւ 1938 թվականը, ապա դուք ձեր լրիվ Սոցիալական Ազահովության նպաստները ստանալու համար իրավասու եք եղել ձեր 65-րդ տարեղարձի պահին: Լրիվ նպաստների վճարնան տարիքը սկսեց աստիճանաբար բարձրանալ 2003 թվականում: Գործածեցեք հետևյալ աղյուսակը ձեր լրիվ կենսաքոշակի անցնելու տարիքը դրոշելու համար:

Ծննդյան տարեթիվը	Լրիվ կենսաքոշակի անցնելու տարիքը
1937թ. կամ ավելի առաջ	65 տարի
1938թ.	65 տարի եւ 2 ամիս
1939թ.	65 տարի եւ 4 ամիս
1940թ.	65 տարի եւ 6 ամիս
1941թ.	65 տարի եւ 8 ամիս
1942թ.	65 տարի եւ 10 ամիս
1943-1954թթ.	66 տարի
1955թ.	66 տարի եւ 2 ամիս
1956թ.	66 տարի եւ 4 ամիս
1957թ.	66 տարի եւ 6 ամիս
1958թ.	66 տարի եւ 8 ամիս
1959թ.	66 տարի եւ 10 ամիս
1960թ.	67 տարի

**ԾԱՌՈՒՅՈՒՄ:** Հակապակ որ լրիվ կենսաքոշակի անցնելու տարիքը բարձրանում է, դուք այնուամենայնիվ, չեք 65-րդ տարեղարձի երեք ամսիս ընթացքում պետք է դիմեք «Medicare»-ի նպաստների հասնար: Եթե դուք ավելի երկար ապասեք, ապա չեք «Medicare»-ի բժշկական ապահովագրությունը (Մաս B) եւ դեղագիրով դեղորայք գնելու ծրագիրը (Մաս D) կարող է ավելի քանի լինի:

62 65 67

## **Յետաձգված Կենսաքոշակ**

Եթե դուք որոշեք հետաձգել նպաստների ստացումը ձեր լրիվ կենսաքոշակի անցնելու տարիքից հետո, There should not be a break in the paragraph. Please continue with ձեր Սոցիալական ձեր Սոցիալական Ապահովության նպաստները բարձրացվում են որոշակի տոկոսով՝ կախված ձեր ծննդյան թվից: Օրինակ, եթե դուք ծնվել եք 1940թ.-ին, ապա ձեր նպաստները յուրաքանչյուր տարվա համար կրաքանակ 7 տոկոսով՝ ձեր լրիվ կենսաքոշակի անցնելուց տարիքից մինչեւ 70 տարեկանը եթե այդ ընթացքում դուք չեք ստանում կենսաքոշակի նպաստներ:

## **Վաղաժամ Կենսաքոշակ**

Դուք կարող եք 62 տարեկանում սկսել նպաստներ ստանալու: Սակայն ձեր նպաստները կլրճատվեն **մշտապես** եթե կանոլի անցնելք կենսաքոշակի: Զեր նպաստը կրճատվում է մոտ կես տոկոսով՝ յուրաքանչյուր ամավա համար որ լրիվ կենսաքոշակ անցնելու տարիքից առաջ ստանաք Սոցիալական Ապահովության նպաստներ: Օրինակ, եթե ձեր լրիվ կենսաքոշակի անցնելու տարիքը 66 տարեկան եւ 8 ամսական է, սակայն դուք 62 տանեկանում դիմում եք Սոցիալական Ապահովության նպաստների, ապա դուք միայն կստանաք ձեր լրիվ նպաստի 75 տոկոսը:

**ԾԱՆՈՒՅՈՒՄ:** Հետազա լարիներին կրճատումը սպիտի մեծ է լինելու, քանի որ լրիվ կենսաքոշակի անցնելու լարիքը բարձրանում է:

## **Եթե դուք աշխատում եք եւ ստանում նպաստներ**

Դուք կարող եք շարունակել ձեր աշխատանքը եւ տակալին ստանալ կենսաքոշակ: Լրիվ կենսաքոշակային տարիքին հասնելու ամսից սկսյալ ձեր վաստակը չի կրճատի ձեր Սոցիալական Ապահովության նպաստները: Սակայն, ձեր նպաստները կլրճատվեն, եթե դուք աշխատեք լրիվ կենսաքոշակի անցնելու տարիքը չհասած եւ ձեր վաստակը գերազանցի որոշ սահմանաշափ:

Եթե դուք աշխատում եք եւ լրիվ կենսաքոշակի անցնելու տարիքից երիտասարդ եք, յուրաքանչյուր 2 դոլարի փոխարեն մենք ձեր նպաստներից կը պահենք 1 դոլար երբ ձեր հասույթը անցնի 13,560 (սահման 2008թ.-ի) դոլարի սահմանը:

Չեր լրիւ կենսաքոշակի անցնելու տարիքը հասնելու տարում, իրաքանչյուր 3 դոլարի փոխարեն մենք ձեր նպաստներից կը պահենք 1 դոլար երք ձեր հասույթը անցնի 36,120 դոլարի սահմանը: Այս դարբում է այն անսուն երք դոլար հասում եք լրիվ կենսաքոշակի անցնելու տարիքը:

Եթև դուք լրիվ կենսաքոշակի անցնելու տարիքն եք կամ ավելի, դուք կարող եք ունենալ անսահման վաստակում եւ միեւնոյն ժամանակ ստանալ ձեր լրիվ նպաստները:

Լրացուցիչ տեղեկություն ստանալու համար, թե ինչպես է աշխատանքը ազդում ձեր նպաստների վրա, կարդացեք *Ինչպէ՞՞ն Ե Աշխատանքը Ազդում Զեր Նպաստների հրատարակությունը* (հրապարակման համար 05-10069-AM):

### **ԾԱՆՈՒՅՑՈՒՄ. Կամ լրաբեր եւ յարուկ կանոններ**

*Սոցիալական Ապահովության հաշմանդամության եւ Լրացուցիչ Սոցիալական Եկամուգի (SSI) վճարումների սպացող մարդկանց համար: Այդ նպաստառումները պետք է իրենց լրիվ հասույթը յայրնեն Սոցիալական Ապահովության:*

## **Այրի տղամարդկանց եւ այրի կանանց կենսաքոշակի անցնելը**

Եթե դուք ստանում եք այրի տղամարդու կամ այրի կնոջ նպաստներ, դուք կարող եք նաև անցնել ձեր անձնական տարիքային նպաստներին 62 տարեկանում՝ եթե ձեր նպաստի գումարը լինի ավելի բարձր քան այն որք ստանում եք ձեր մահացած ամուսնու (կնոջ) տվյալներով: Շատ դեպքերում դուք կարող եք սկսել ստանալ կրծառված չափով մի տեսակի նպաստ եւ այնուհետև անցնել մյուս նպաստին ստանալու լրիվ նպաստներ երք հասնեք՝ լրիվ կենսաքոշակային տարիքը: Կանոնները բարդ են եւ տարրերվում են կախված ձեր իրավիճակից, ուստի ձեզ մատչելի տարրերակների մասին խոսեք Սոցիալական Ապահովության ներկայացուցչի հետ:

Լրացուցիչ տեղեկություն ստանալու համար, կարդացեք *Ծերության Նպաստների հրատարակությունը* (հրապարակման համար 05-10035-AM):

## **Հաշմանդամության նպաստները**

Եթե դուք չեք կարող աշխատել մարմնական կամ մտային վիճակի պատճառով, որն ակնկալվում է, որ կտելի առնվազն մեկ տարի կամ կավարտվի մահով, ապա դուք կարող եք իրավասու լինել Սոցիալական Ապահովության հաշմանդամության նպաստներ ստանալու համար:

Հաշմանդամության մեր կանոնները տարբերվում են այլ անձնական ծրագիրներից կամ կառավարական գերատեսչությունների կանոններից: Չեք իրավասությունը հաշմանդամության նպաստ ստանալու համար այլ գերատեսչությունից կամ ծրագրից, չի նշանակում, որ դուք նաև իրավասու կլինիկ մեզանից ստանալու հաշմանդամության նպաստ: Նոյնպես, ձեր հաշմանդամության մասին բժշկից տեղեկանք ունենալը չի նշանակում, որ դուք ինքնարերաբար իրավասու կլինիկ Սոցիալական Ապահովության հաշմանդամության նպաստների համար: Լրացուցիչ տեղեկություն ստանալու համար, կարդացեք **Հաշմանդամության նպաստների հրատարակությունը** (հրապարակման համար 05-10029-AM): Այս կայքում նաև [www.socialsecurity.gov/applyfordisability](http://www.socialsecurity.gov/applyfordisability) կարող եք դիմել նպաստների:

Հաշմանդամություն ունեցող մարդիկ, ներառյալ երեխաներ, որոնք ունեն փոքր եկամուտ եւ համեստ միջոցներ, նոյնպես կարող են իրավասու լինել հաշմանդամության նպաստների համար՝ Լրացուցիչ Ապահովության Եկամուտի (SSI) ծրագրի միջոցով: «SSI»-ի մասին լրացուցիչ տեղեկության համար դիմեք մեզ, խնդրելով **Լրացուցիչ Ապահովության Եկամուտի հրատարակությունը** (հրապարակման համար 05-11000-AM):

Եթե դուք հաշմանդամ լինեք, պեսոք է անմիջապես դիմեք հաշմանդամության նպաստների, որովհետեւ հաշմանդամության դիմումնագրի ձեւակերպումը սովորաբար տեսում է մի քանի ամիս: Հնարավոր է որ մենք կարողանանք ավելի արագ ընթացք տալ ձեր դիմումնագրի եթե դիմելու պահին դուք ունենաք հետեւյալը.

- Բժշկական փաստարդեր ձեր բժիշկներից, ախտաբուժարաններից, հիվանդանոցներից, բուժարաններից եւ ձեր կենսապայմանները ուսումնասիրող աշխատողներից.
- Բնալուծարանի եւ այլ քննությունների արդյունքները.

- Զեր բժիշկների անունները, դարմանատուների եւ հիվանդանոցների անվանումները, հասցեները, հեռախոսի եւ ֆաքսի համարները.
- Զեր գործածաց բոլոր դեղորայքների անվանումները. ինչպես նաև
- Վերջին 15 տարվա ընթացքում ձեր բոլոր գործառուների եւ աշխատանքի պարտավորություննի մասին տեղեկություն:

## Նպաստներ ձեր ընտանիքի համար

Երբ դուք սկսում եք ստանալ Սոցիալական Ապահովության ծերության կամ հաշմանդամության նպաստներ, ձեր ընտանիքի նյուու անդամները նոյնապես կարող են իրավասու լինել վճարումների համար: Օրինակ, ձեր ամուսնուն կամ կնոջը կարող ենք վճարել նպաստներ.

- Եթե նա 62 տարեկան է կամ ավելի. կամ
- Որեւէ տարիքի է եթե նա խնամում է ձեր երեխային (երեխան պետք է լինի 16 տարեկանից ցածր կամ լինի հաշմանդամ եւ ձեր տվյալներով ստանա Սոցիալական Ապահովության նպաստներ):

Նպաստներ կարող են վճարվել նաև ձեր ամուրի երեխաներին, եթե նրանք.

- 18 տարեկանից երիտասարդ են.
- 18-ից մինչեւ 19 տարեկան են, սակայն հաճախում են տարրական կամ միջնակարգ դպրոց.
- 18 տարեկան կամ ավելի են եւ ծանր հաշմանդամ են (հաշմանդամությունը պետք է սկսված լիներ մինչեւ 22 տարեկանը):

Եթե դուք նպաստներ ստանալուց հետո երեխա ունենաք (մերայլա որդեգրված երեխան), ապա մեզ տեղեկացրեք երեխայի մասին, որպեսզի մենք կարողանանք որոշել, թե արդյոք երեխան իրավասու է նպաստների համար:

## Որքա՞ն կարող են ստանալ ընտանիքի անդամները

Ընտանիքի յուրաքանչյուր անդամ կարող է իրավասու լինել ամսական նպաստի համար, որը կազմում է ձեր նպաստի գումարի մինչեւ կեսը: Սակայն, զոյտրյուն ունի ձեր ընտանիքին վճարման ենթակա ընդհանուր գումարի սահման: Սահմանը

տատանվում է, բայց սովորաբար հավասար է ձեր ծերության նպաստի 150-ից մինչեւ 180 տոկոսը:

## Եթե դուք ամուսնալուծված եք

Եթե դուք ամուսնալուծված եք, ապա ձեր նախկին ամուսինը (կինը) կարող է ձեր հասույթով իրավասու լինել նպաստներ ստանալու համար: Որոշ պարագաներում նա կարող է ստանալ նպաստներ, նոյնիսկ եթե դուք չեք ստանում դրանք: Իրավասու լինելու համար ամուսնալուծված ամուսինը (կինը) պետք է.

- Ամուսնացած լինելու ձեզ հետ առնվազն 10 տարի:
- Ամուսնալուծված լինելու առնվազն երկու տարի:
- Լինի առնվազն 62 տարեկան:
- Լինի չամուսնացած:
- Իրավասու չինի հավասար կամ ավելի բարձր այլ նպաստ ստանալու համար՝ իմբնված իր անձնական կամ այլ անձի աշխատանքի վրա:

## Վերապրոդների նպաստներ

Զեր մահվան դեպքում ձեր ընտանիքը կարող է իրավասու լինել ձեր աշխատանքի վրա հիմնված նպաստներ ստանալու համար:

Հետեւյալ ընտանիքի անդամները կարող են ստանալ նպաստներ՝ այրի տղանարդ կամ այրի կին, որը.

- 60 տարեկան է կամ ավելի. կամ
- 50 տարեկան է կամ ավելի եւ հաշմանդամ է. կամ
- Որեւէ տարիքի է եթե նա խնամում է ձեր երեխային, որը 16 տարեկանից ցածր է կամ հաշմանդամ է եւ ստանում է Սոցիալական Ապահովության նպաստներ:

Զեր երեխաները նոյնապես կարող են ստանալ նպաստներ, եթե նրանք ամուսնացած չեն եւ.

- 18 տարեկանից երիտասարդ են.
- 18-ից մինչեւ 19 տարեկան են, սակայն հաճախում են տարրական կամ միջնակարգ դպրոց.
- 18 տարեկան կամ ավելի են եւ ծանր հաշմանդամ են (հաշմանդամությունը պետք է սկսված լինել մինչեւ 22 տարեկանը):

Զեր ծնողները նոյնիսկ կարող են ձեր հասույթով ստանալ նպաստներ, եթե նրանց խնամքի առնվազն կեսը դուք հայրայթել եք:

## **ՎՃԱՐՈՒՄ ՄԱԻՎԱՆԻՒՅԻՆ ԻԵՍՈՆ**

Եթե դուք ունեք բավարար վարկեր, ապա ձեր մահվանից հետո կկատարվի նաև միանվագ վճար 255 դոլարի չափով: Այդ նպաստը կարող է վճարվել ձեր ամուսնուն (կնոջը) կամ անշափահան երեխաներին, եթե նրանք բավարարում են որոշակի պահանջներին:

### **Եթե դուք ամուսնալուծված եք**

Եթե դուք ամուսնալուծված եք, ապա ձեր մահվան դեպքում ձեր նախկին ամուսինը (կինը) կարող է իրավասու լինել վերապրոբերի նպաստ ստանալու համար: Նա սեղու է:

- Լինի առնվազն 60 տարեկան (կամ 50 տարեկան՝ եթե հաշմանդամ է) եւ ամուսնացած լիներ ձեզ հետ առնվազն 10 տարի:
- Լինի որեւէ տարիք, եթե նա խնամում է մի երեխայի, որն իրավասու է ձեր աշխատանքի հիման վրա նպաստ ստանալու համար.
- Իրավասու շլինի իր անձնական աշխատանքի հիման վրա հավասար կամ ավելի բարձր նպաստ ստանալու համար:
- Ներկայումս ամուսնացած շլինի, քացի եթե ամուսնությունը տեղի ունեցել է 60 տարեկանից հետո կամ 50 տարեկանից հետո՝ եթե հաշմանդամ է:

**ԾԱՆՈՒՅՈՒՄ:** Եթե ձեր նախկին ամուսինը (կինը) կրկին ամուսնանում է, ապա նա կարող է իրավասու լինել ձեր աշխատանքի կամ նոր ամուսնու (կնոջ) աշխատանքի հիման վրա Սոցիալական Ապահովության նպաստներ սրանալու համար: Նա կարանա այն որ ավելի բարձր է:

### **Որքա՞ն են ստանալու ձեր վերապրոդները**

Ձեր ընտանիքի վերապրոդ անդամները ստանում են Սոցիալական Ապահովության ձեր հիմնական նպաստի մի մաս՝ սովորաբար յուրաքանչյուրը 75-ից մինչեւ 100 տոկոսի չափով: Սակայն, զոյտրյուն ոճի ընտանիքին յուրաքանչյուր ամիս վճարվող գումարի սահմանափակում: Սահմանը տատանվում է, բայց սովորաբար հավասար է ձեր ծերության նպաստի 150-ից մինչեւ 180 տոկոսին:

## Չեր նպաստները կարող են հարկվել

Որոշ մարդիկ, որոնք ստանում են Սոցիալական Ապահովության նպաստներ, պետք է հարկեր վճարեն: Մեր նպաստառուներից մոտ մեկ երրորդը իրենց նպաստներից հարկեր են վճարում:

Դուք ձեր նպաստներից պետք է վճարեք հարկեր, եթե դուք ձեր դաշնային հարկային հայտարարագիրը ներկայացնում եք որպես «անհատ» և ձեր ընդհանուր եկամուտն է 25,000 դոլարից ավելի: Եթե դուք ներկայացնում եք համատեղ հայտարարագիր, ապա դուք պետք է վճարեք հարկեր, եթե ձեր և ձեր ամուսնու (կնոջ) եկամուտը կազմում է 32,000 դոլարից ավելի: Լրացնիչ տեղեկության համար զանգահարեք Հարկային Վարչության՝ **1-800-829-3676** հեռախոսահամարով:

## Երբ պատրաստ եք նպաստների դիմելու

Նպաստների համար դուք պետք է դիմեք ձեր նպաստները սկսվելու ցանկալի ամսարվից երեք ամիս առաջ: Եթե դուք լիովին պատրաստ չեք կենսարոշակի անցնելու համար, բայց մոտածում եք դա անել մոտակա ապագայում, ապա միցուցե ցանկություն ունենար այցելել Սոցիալական ապահովության կայքէջը՝ [www.socialsecurity.gov/retire2](http://www.socialsecurity.gov/retire2)-ում տեղակայված կենսարոշակի անցնելու պլանավորման մեր հարմար և տեղեկատվային միջոցից օգտվելու նպատակով: Դուք նպաստների համար կարող եք դիմել նաև մեր կայքէջում:

Այցելեք [www.socialsecurity.gov/applyforbenefits](http://www.socialsecurity.gov/applyforbenefits) ծառայությունը: Դուք նաև կարող եք հաշվարկել ձեր նպաստների գումարը՝ [www.socialsecurity.gov/planners](http://www.socialsecurity.gov/planners) հասցեում:

## Զեղնից ի՞նչ կպահանջվի դիմելու համար

Նպաստների համար դիմելու ժամանակ մենք կիսնողենք ձեզնից որոշ փաստարդեր: Պահանջվող փաստարդերը կախված են ձեր կողմից հայցվող նպաստների տեսակից: Նշված փաստարդերի արագ ներկայացնումը մեզ հնարավորություն կտա ավելի արագ ձեր նպաստները վճարելու համար: Բոլոր փաստարդերը պետք է լինեն բնագիր կամ վավերացված այն կազմակերպության կողմից որ զանոնք պարենաւորած է: Մենք չենք կարող ընդունել կրկնօրինակներ կամ նոտարի կողմից հաստատված փաստարդեր:

Մի հետաձգեք դիմումի ներկայացումը պարզապես այն պատճառով, որ չունեք ձեզնից պահանջվող բոլոր փաստարդերը: Մենք կօգնենք ձեզ որ դրանք ապահովեք:

Հետեւեալ ցանկը պարունակում է որոշ փաստարդերի օրինակներ որոնք կարող են պահանջվել ձեզնից Սոցիալական Ասլահովության համար դիմում ներկայացնելու ժամանակ.

- Ձեր Սոցիալական Ասլահովության համարը (կամ ձեր համարի գրանցումը).
- Ձեր ծննդյան վկայականը.
- Ձեր երեխաների ծննդյան վկայականները (եթե նրանք դիմում են).
- ԱՄՆ քաղաքացիության կամ Ամերիկայի Միացյալ Նահանգներու մեջ օրինավոր ապրելու կարգավիճակը, եթե դուք (կամ դիմուղ երեխան) Միացյալ Նահանգներում չեք ծնվել.
- Ձեր ամուսնու (կնոջ) ծննդյան վկայականը եւ Սոցիալական Ասլահովության համարը, եթե նա դիմում է նպաստների համար ձեր փաստակի հիման վրա.
- Ամուսնության վկայականը (եթե գրանցվում եք ամուսնու (կնոջ) տվյալներով).
- Ձեր զինվորական գորացրման մասին փաստարդերը, եթե անցել եք զինվորական ծառայություն.
- Ձեր ամենավերջին W-2 ձեւարությունը կամ հարկային հայտարարագիրը, եթե դուք ինքնազբաղ եք:

Դիմելու ժամանակ մենք ձեզ կհայտնենք պահանջվող այլ փաստարդերի մասին:

## Ինչպես են վճարվում նպաստները

Սոցիալական Ասլահովության նպաստները սովորաբ զետեղվում են ուղակիօրեն ձեր դրամատան հաշվի մեջ: Այս վճարման ձեվը պարզ եւ ասլահով է: Դիմում ներկայացնելու ժամանակ ձեր մոտ ունեցեք ձեր դրամատան հաշվի գրքոյլը կամ կ հաշվի թիվը: Այս տեղեկության կարիքը ունենք վստահ լինելու բեկանությունը: Այս տեղեկության կարիքը ունենք վստահ լինելու բեկանությունը:

Եթե դուք չունեք դրամական հաշիվ, ապա մենք ձեր ամսական նպաստները վճարում ենք այլ միջոցներով:

## **Լրացուցիչ Ապահովության Եկամուտի (SSI) ծրագիրը**

Եթե դուք ստանում եք Սոցիալական Ապահովության նպաստներ, բայց ունեք սահմանափակ եկամուտ եւ միջոցներ (ձեզ պատկանող իրեր), ապա Լրացուցիչ Ապահովության Եկամուտի ծրագիրը կարող է օգնել ձեզ: Լրացուցիչ Ապահովության Եկամուտը հայրայքվում է ընդհանուր պետական եկամուտից, այլ ոչ Սոցիալական Ապահովության հարկերից:

Լրացուցիչ Ապահովության Եկամուտը վճարումներ է սրամադրում այն մարդկանց, որոնք հաշմանդամ, կրոյ կամ 65 տարեկանից ավել են: Եթե որոշում ենք ձեր իրավասությունը Լրացուցիչ Ապահովության Եկամուտի, մենք հաշվի չենք առնում ձեր որոշակի եկամուտը եւ միջոցներից մի մասը: Օրինակ, ձեր սունը եւ ձեր ինքնաշարժը սովորաբար հաշվի չեն առնվում:

Դիմեք մեզ յաւելյալ տեղեկատվության համար կամ Լրացուցիչ Ապահովության Եկամուտի դիմելու հարցերու:

### **Բողոքարկման իրավունքը**

Եթե դուք համաձայն չեք ձեր դիմումի վերաբերյալ կայացրած որոշման հետ, ապա դուք կարող եք բողոքարկել այն: Մանրամասն տեղեկության համար կարդացեք *Բողոքարկման Հնարացքը* հրատարակությունը (հրապարակման համար 05-10041-AM), որը կարող եք ստանալ Սոցիալական Ապահովությունից:

Դուք իրավունք ունեք Սոցիալական Ապահովության հետ ձեր հարցերը լուծել ներկայացնեցիչի՝ օրինակ փաստաբանի միջոցով: Յաւելյալ տեղեկություն պարունակվում է *Ներկայացուցիչ Ունենալու Ձեր Իրավունքը* հրատարակությանմեջ (հրապարակման համար 05-10075-AM), որը նոյնպես կարող եք ստանալ Սոցիալական Ապահովությունից:

Medicare մեր երկրի հիմնական բժշկական ապահովագրության ծրագիրն է հաջմանդամների ու 65 տարեկան և ավելի տարեց անձների համար:

Չշփոթեք Medicare եւ Մէտիրէյտը: Մէտիրէյտը առողջապահական ծրագիր մըն է ցածր եկամուտ եւ սահմանափակ միջոցներ ունեցող մարդկանց համար: Այն սովորաբար վարդիմ է նահանգային ապահովության կամ սոցիալական գերատեսչությունների կողմից: Որոշ մարդկի բավարարում են ծրագրերից մեկի պահանջների, իսկ ունակը բավարարում են Medicare եւ Medicaid պահանջներին:

## Medicare կազմված է չորս մասերից

- Հիվանդանոցային ապահովագրություն (Մաս A), որն օգնում է վճարելու հիվանդանոցի մեջ ստացված խնամքի եւ որոշակի հետեւելական ծառայությունների համար.
- Բժշկական ապահովագրություն (Մաս B), որն օգնում է վճարելու բժիշկների ծառայությունների, հիվանդանոցի դուրս ստացված խնամքի եւ բժշկական այլ ծառայությունների համար:
- Medicare առաւելական ծրագիրներ (Մաս C), գտնվում է որոշ շրջաններում: Անհատները որոնք ունեն Մաս A եւ Մաս B, կարող են ստանալ իրենց բժշկական լրիվ ծառայությունները Մաս C ընդունող բժշկական կազմակերպություններից:
- Medicare դեղագիրով դեղորայք գնելու ծրագիր (Մաս D), որն օգնում է վճարելու դեղագիրով գնվելիք դեղորայքի ծախսերուն:

## Ո՞վ է իրավասու բժշկական ապահովագրության համար (Մաս A)

Անհատներ մեծամասնությամբ ստանում են բժշկական ապահովագրություն, եթե դրանում են 65 տարեկան: Դուք ինքնարելարար բավարարում եք դրա պահանջներին, եթե իրավասու եք Սոցիալական Ապահովության կամ Երկարուդու աշխատողների տարիքային նպաստներ ստանալու համար: Կամ էլ դուք կարող եք բավարարել պահանջներին ձեր ամուսնու (կնոջ) Շերայի ամուսնալուծված ամուսնու (կնոջ) աշխատանքի հիման վրա: Իսկ ուրիշներ բավարարում են պահանջներին,

որովհետեւ նրանք կառավարական աշխատողներ են, որոնք ընդգրկված չեն Սոցիալական Ապահովության, սակայն վճարում են Medicare հարկեր:

Եթե դուք 24 ամսվա ընթացքում ստանում եք Սոցիալական Ապահովության հաշմանդամության նպաստ, ապա դուք կրավարարեք հիվանդանոցային ապահովագրության համար:

Մորոնք տառապում են երկարատեղ երիկամային հիմնդությունից, որը պահանջում է արյան մաքրում (dialysis) կամերիկամների փոխատնիկում, կամ ունեն երկրորդական ամիսուրոֆիկ սկերոզով (Լու Գերիգի հիվանդություն) բավարարում են հիվանդանոցային ապահովագրության պահանջներին, եթե նրանք բավականաչափ երկար աշխատել են կամ եթե նրանք պահանջներին բավարարող աշխատողի ամուսինը (կինը) կամ երեխան են:

## **Ո՞վ կարող է ստանալ բժշկական ապահովագրություն (Մաս B)**

Գրեթե բոլոր անոնք որոնք ունեն Medicare Մաս A նաև բավարարում են հիվանդանոցային ապահովագրության պահանջներին եւ կարող են գրանցվել բժշկական ապահովագրության համար: Մաս B-ն ստիպողական ծրագիր չէ: Դա անվճար է չի: 2008 թվականում ամսական ապահովագրավճարն է 96.40: Մարդկանց մեծ մասը անձանագրվում է Medicare այս մասին:

## **Ո՞վ Կարող է ստանալ Medicare առաւելական ծրագիրներ (Մաս C)**

Անհատներ որոնք ունեն հիվանդանոցային ապահովագրություն (Մաս A) եւ բժշկական ապահովագրություն (Մաս B) կարող են մասնակցել Medicare առաւելական ծրագրի: Medicare առաւելական ծրագիրը պարունակում է՝

- Խնամքը ստանձնող Medicare ծրագիրներ.
- Medicare նախընտրող նախախնամության կազմակերպություններ (PPO).
- Անձնական վճարում ընդունող նախախնամության կազմակերպություններ.
- Medicare մասնագիտական ծրագիրներ:

Medicare առավելական ծրագիրը հավասարում է Մէտիկէրի (Medigap) պլայնանազդության: Որովհետեւ ստանում եք յանձնյալ նպաստներ, կարող եք դուք յանձնյալ ամսական շահարաժին վճարեք:

## Ո՞վ Կարող է ստանալ Medicare դեղագիրով դեղորայք գնելու ծրագիրը (Մաս D)

Ցանկացած մարդ, ով ունի Medicare հիվանդանոցային ապահովագրություն (Մաս A) կամ բժշկական ապահովագրություն (Մաս B) կամ Medicare-ի շահավետ ծրագիր (Մաս C) կարող է իրավասու լինել դեղատոմսով բաց թողնվող դեղերի ծածկույթի (Մաս D) համար: Դեղատոմսով բաց թողնվող դեղերի ծրագիրը պարտադիր չէ եւ ծածկույթի համար դուք վճարում եք լրացուցիչ ամսական ապահովագրավճարներ:

Լրացուցիչ տեղեկատվության համար դիմե՛ք մեզ եւ խնդրե՛ք Medicare հրապարակումը (Հրապարակում թիվ 05-10043-AM):

## Օգնություն Medicare ծախսերի նկատմամբ ցած եկամուտ ունենալող մարդկանց համար

Եթե դուք ստանում եք Medicare եւ ունեք փոքր եկամուտ եւ սակավ միջոցներ, ապա ձեր նահանգը կարող է վճարել ձեզ Medicare ձեր ապահովագրավճարները, իսկ որոշ դեպքերում՝ Medicare այլ ծախսերը, ինչպիսիք են շապահովագրված նվազագույնները եւ համապահովագրությունը:

Պահանջներին ձեր համապատախանության հարցը կարող է որոշել միայն ձեր նահանգը: Համապատախանատվություն հարցը պարզելու համար զանգահարե՛ք սոցիալական ծառայության ձեր նահանգային կամ տեղական գրասենյակին կամ «Medicaid»-ի գործակալությանը:

Դուք կարող եք ստանալ լրացուցիչ տեղեկատվություն այդ ծրագրերի մասին Medicare եւ Medicaid Ծառայությունների Կետրոնից. Այցելություն [www.medicare.gov](http://www.medicare.gov) յանձնյալ տեղեկության համար կարդացեք *If you need help paying Medicare costs, there are programs that can help you save money (Medicare Ծախսերը Կրնար Խնամել)* հրատարակությունը (CMS-10126):

## **«Հավելյալ օգնություն» Medicare ղեղատոմսով բաց բողնվող դեղերի հետ կապված ծախսերի հարցում**

Եթե դուք ունեք սահմափակ եկամուտ և միջոցներ, դուք կարող եք համապատասխանել հավելյալ օգնության պահանջներին՝ ղեղատոմսով բաց բողնվող դեղերի դիմաց Medicare Սաս D-ով վճարելու համար: Սոցիալական ապահովության դերը կայանում է նրանում, որպեսզի օգնի ձեզ հասկանալու, թե դուք ինչպես կարող եք համապատասխանել պահանջներին և ընթացը տալ հավելյալ օգնության համար ձեր դիրում-հայտարարագրին: Տեսնելու, թե որոյոք դուք համապատասխանում եք պահանջներին կամ դիմելու համար, զանգահարելոք Սոցիալական ապահովության անվճար հեռախոսահամարով կամ այցելելոք մեր վեր կայքը.

### **Որոշ տեղեկություն Սոցիալական Ապահովության մասին**

#### **2008թ-ի Սոցիալական Ապահովության հարկերը**

- Դուք եւ ձեր գործառուն յուրաքանչյուրդ վճարում եք 6.2 տոկոս
- Եթե դուք ինքնազբաղ եք, ասլա դուք վճարում եք 12.4 տոկոս
- Դուք չեք վճարում Սոցիալական Ապահովության հարկեր 102,000 դոլարից ավելի կազմող հասույթից:

#### **2008թ-ի Medicare հարկերը**

- Դուք եւ ձեր գործառուն յուրաքանչյուրդ վճարում եք 1.45 տոկոս
- Եթե դուք ինքնազբաղ եք, ասլա դուք վճարում եք 2.9 տոկոս
- Medicare հարկերը վճարվում են բոլոր հասույթից սահման գոյություն չունի:

#### **Աշխատանքային վարկեր 2008թ-ին**

- Վաստակած յուրաքանչյուր 1,050 դոլարի համար դուք ստանում եք Սոցիալական Ապահովության «credit (վարկ)» ստարեկան միջնեւ չորս վարկ
- Մարդկանց մեծ մասի համար պահանջվում է 40 վարկ, որպեսզի նրանք իրավասու լինեն ծերության նախատների համար
- Երիտասարդ մարդկանց պահանջվում է ավելի քիչ քանակությամբ վարկ հաշմանդամության և վերապրոդների կապակցությամբ նախատների համար:

## **2008թ-ի Սոցիալական Ապահովության միջին ամսական նպաստներ**

- Կենսաքոչակի անցած աշխատող՝ 1,079 դոլար
- Կենսաքոչակի անցած գույզ՝ 1,761 դոլար
- Հաշմանդամ աշխատող՝ 939 դոլար
- Հաշմանդամ աշխատող՝ ամուսնու (կնոջ) եւ երեխայի հետ՝ 1,571 դոլար
- Այրի տղամարդ կամ այրի կին՝ 967 դոլար
- Երիտասարդ այրի տղամարդ կամ այրի կին երկու երեխաների հետ՝ 2,074 դոլար

## **2008թ. Լրացուցիչ Ապահովության Եկամուտի վճարումների սահմանաշափերը**

(շրջագրելում նահանգի յանելացումը եթե վերաբերում է )

- 603 դոլար անհատի համար
- 904 դոլար գույզի համար

[www.socialsecurity.gov](http://www.socialsecurity.gov)



**Social Security Administration**  
SSA Publication No. 05-10024-AM  
Understanding The Benefits (Armenian)  
January 2008

